

---

**ԳՅՈՒՆՏԵՐ ԼՅՈՒԻԻ «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ՍԵՂԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Հայոց ցեղասպանության հարցը մշտապես գտնվում է հայ, թուրք և արևմտյան ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Այս հարցին նվիրված բազմալեզու հարուստ գրականության մեջ, ցավոք, քիչ չեն ցեղասպանության փաստին թերահավատությամբ վերաբերվող, այն հերքող և կամ նույնիսկ իրականացված ոճիրը այս կամ այն չհիմնավորվող հիմնավորմամբ արդարացնող հրապարակումները, որոնք, վիճարկելով 1915 թ. հայերի դեմ կատարված եղեռնագործության ցեղասպանական բնույթը, քարոզում են իրենց ժխտողական դիրքորոշումը: Այս առումով մասնավորապես աչքի է ընկնում Գյունտեր Լյուիի *"The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide"* (University of Utah Press, 2004) գիրքը, որի առանցքում Հայոց ցեղասպանության ժխտողականությունն է: Ու թեև Գ. Լյուին նշում է, որ իր դիրքորոշումը լիովին չեզոք է, և ինքը նպատակադրված է վեր հանելու *Ճշմարտությունը*, ակնհայտ է, որ նրա *Ճշմարտությունը* հեռու է ճշմարիտ լինելուց:

Ինչպես այս հարցի քննությանը վերաբերող բազմաթիվ այլ գործերում, Լյուիի այս գրքում նույնպես առաջին իսկ պահից ուշադրություն է գրավում երկի վերնագիրը<sup>1</sup>:

Հայտնի է, որ ցանկացած աշխատություն իր ամբողջության մեջ կարող է դիտարկվել որպես տեքստ, իսկ վերնագիրը՝ որպես այդ տեքստի անվանում, որն արտացոլում է աշխատության գլխավոր հարցադրումն ու հեղինակի դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ: Եվ քանի որ յուրաքանչյուր վերնագիր, իր մեջ խտացնելով տեքստի ողջ հասկացական բովանդակությունն ու հեղինակի մտադրությունը, մաև միտված է ապահովելու դրա տարբեր մասերի միասնականությունը, ապա վերնագրի ճիշտ ընկալումն ու հասկացումն իրավամբ կարելի է համարել աշխատության իմաստաբովանդակային ամբողջության համապատասխան ընկալման ու հասկացման գործընթացի առաջին քայլը: Այդուհանդերձ, եթե որոշ դեպքերում քննարկվող հիմնահարցը կամ դրա նկատմամբ հեղինակի գնահա-

---

<sup>1</sup> Սեր ուսումնասիրություններում արդեն առիթ ունեցել ենք ընդգծելու վերնագրի զբաղեցրած ուժեղ դիրքն ու կարևոր դերը ցանկացած տեքստում և հատկապես Հայոց ցեղասպանության խնդիրները քննող տարբեր աշխատություններում (տե՛ս S. Gasparyan, G. Harutyunyan, L. Gasparyan, Interpretations of the Armenian Genocide: A Linguocognitive Study // "Language, Literature & Art in Cross-Cultural Contexts." AASE-3 International Conference. Programme and Abstracts. Yerevan. 2011, նաև՝ Ս. Գասպարյան, Լ. Գասպարյան, Խորենացու «Պատմություն Հայոց» երկի վերնագիրը և դրա անգլերեն թարգմանությունը // Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2010, 132.2, էջ 40-47: Այդ մասին տե՛ս նաև՝ Гаспарян Г. Интегрирующая функция заголовка в рассказе У. Сарояна "Antranik of Armenia" // «Գլածոր»-20, Եր., 2011):

տողական վերաբերմունքը լեզվական տարբեր միջոցներով կարող է ծածկագրված լինել վերնագրում, ապա Գ. Լյուիի խնդրո առարկա աշխատության մեջ դրանք գրեթե բացահայտ են դրսևորվում: Իհարկե, մի պահ կարող է թվալ, որ "a **disputed Genocide**" բառակապակցության գործածությանը հեղինակն այստեղ ընդամենը արձանագրում է Հայոց ցեղասպանության խնդիրների քննարկման դաշտում առկա՝ ցեղասպանության իրողությունը վիճարկող մոտեցումները: Սակայն վերնագրի դիտարկումն ամբողջ - մաս հարաբերակցության դիրքերից բացահայտում է հեղինակի ժխտողական դիրքորոշումն ու պատմական իրողության հավաստիության նկատմամբ անվստահություն սերմանելու միտումը:

Գ. Լյուին միանգամայն չհիմնավորված ջանքեր է գործադրում՝ իր դիտարկումների առանցքում դնելու այն պնդումը, որ գոյություն չունեն համապատասխան հուսալի ապացույցներ, ըստ որոնց թուրքական կառավարությունը պատասխանատու է 1915-1916 թթ. տեղի ունեցած իրադարձությունների համար (*no authentic documentary evidence exists to prove the culpability of the central government of Turkey for the massacre of 1915-16 /p. 250/*):

Մինչդեռ Հայկական հարցին առնչվող նման փաստաթղթերը բազմաթիվ են: Դրանց զգալի մասը պահվում է եվրոպական տարբեր երկրների՝ ժամանակին Կոստանդնուպոլսում գործող դեսպանատների արխիվային փաստաթղթերում և այլ արխիվային ֆոնդերում<sup>2</sup>: Մեծ եղեռնի իրողությանը առնչվող դիվանագիտական փաստաթղթերի հսկայածավալ հավաքածուների մեջ առանձնակի կարևորություն ունի «Հայոց ցեղասպանություն. Թուրքիայի պատասխանատվությունը և միջազգային հանրության պարտավորությունը: Փաստաթղթեր և մեկնաբանություններ» եռահատորյակը՝ իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր Յուրի Բարսեղովի խմբագրությամբ<sup>3</sup>: Այն ընդգրկում է հայկական կոտորածների ինչպես նպատակային ծրագրման ու նախապատրաստման, այնպես էլ իրականացման փաստի վրա վավերագրական հավաստիությամբ լույս սփռող նյութեր գերտերությունների արխիվներից, որտեղ քաղաքական և դիվանագիտական դիտանկյունից ներկայացվում են անհերքելի ապացույցներ այն մասին, որ թուրքական կառավարությունն անկասկած պա-

<sup>2</sup> Այսպես՝ վերջերս Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը «Հայոց ցեղասպանություն. դիվանագիտական վավերագրեր» շարքից հրատարակել է Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական-դիվանագիտական արխիվի 1913-1923 թթ. ժամանակահատվածի՝ Հայկական հարցին առնչվող վավերագրերը: Իտալիան ժամանակի միակ գերտերությունն է, որի արխիվներում պահպանվող Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերը մինչև վերջերս, որոշ բացառություններով, համարյա անհայտ էին հայ ընթերցողին և մասնագիտական շրջանակներին: Ընդ որում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Իտալիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական արխիվի պահոցներում հենց Հայաստան (Armenia) անվան տակ են պահպանվում հայ ժողովրդին առնչվող փաստաթղթերը: Այս հանգամանքը չափազանց հետաքրքրական է հատկապես այն տեսանկյունից, որ նույնիսկ հայկական պետության բացակայության պայմաններում Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններն ընկալելի են եղել որպես Հայաստան: <http://www.genocide-museum.am/arm/italy-document>.

<sup>3</sup> Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий». Том 1, 2, 3. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов. М., 2002, 2003, 2005:

տասխանատու է 1915-1923 թթ. ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջմանն ուղղված քաղաքականության մշակման և հետևողականորեն իրականացման գործում:

Ժողովածուի երկրորդ հատորի թիվ 634 փաստաթղթում, օրինակ, ներկայացված է Հալեպում Գերմանիայի հյուպատոսի զեկույցը (20 դեկտեմբերի 1915 թ.)՝ ուղղված ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին: Այնտեղ նշված է տեղահանության հարցերով զբաղվող ներքին գործերի նախարարության կոմիսարի բացահայտ հայտարարությունը. «Հայաստանը մեզ պետք է առանց հայերի»: Հյուպատոսի մեկնաբանմամբ՝ թուրքական կառավարությունը հետևողականորեն առաջնորդվել է հենց այս սկզբունքով:

Ըստ մեկ այլ փաստաթղթի (թիվ 655)՝ Կովկասյան տարածքային կոմիտեի անդամ Ա. Միկոյանի՝ Վ. Լենինին ուղղված զեկույցում մասնավորապես նշվում է, որ թուրքական կառավարությունը վարում է հայերի ֆիզիկական բնաջնջմանը հետամուտ քաղաքականություն, որի հետևանքով «Թուրքահայաստանը մնացել է առանց հայերի» (Մոսկվա, դեկտեմբեր 1919 թ.): Իսկ համաձայն թիվ 642 փաստաթղթի (Թիֆլիս, 26 հունիսի 1918 թ.)՝ Կովկասում Գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Կրեսս ֆոն Կրեսսենշտեյնի՝ արտաքին գործերի նախարարությանը հղած հեռագրում նշվում է հայերի ցեղասպանության մեջ Գերմանիայի մասնակցության մասին, և արտահայտվում է այն միտքը, որ Գերմանիան պետք է միջոցներ ձեռնարկի Թուրքիայի կողմից մեկուկես միլիոն քրիստոնյաների ոչնչացումը կանխելու համար, այլապես հասարակական կարծիքը և պատմությունը կմեղադրեն Գերմանիային 1915 թ. հայերի դեմ ուղղված չարագործություններում մեղքի իր բաժնեմասն ունենալու համար:

Այս և գոյություն ունեցող բազմաթիվ այլ (ինչպես թուրքական, այնպես էլ արևմտյան) աղբյուրներին ու տվյալներին անհրազեկ և կամ, կամաթե ականա, ոչ լիարժեք ծանոթ Գ. Լյուին արդյո՞ք կարող էր կամ իրավունք ունենալ ձեռնամուխ լինելու, իր իսկ պնդմամբ, «նոր հեռանկարներ բացելու» և ընթերցողին Հայկական հարցին առնչվող «հավաստի» տեղեկություններ փոխանցելու գործին: Պատասխանը միանշանակ մեկն է՝ «ոչ», և այդ «ոչ»-ի վառ ապացույցը Գ. Լյուիի նախաձեռնած ուսումնասիրությունն է ու նրա բազմաթիվ պնդումների սխալականությունը:

Հետաքրքրական է, որ նկարագրելով հայերի դրությունը մինչև XIX դարասկիզբը՝ Լյուին արձանագրում է նրանց տնտեսական, իրավական, բարոյական ու հոգեբանական վիճակը Թուրքահայաստանում: Ու թեև այս շրջանում հայերը հետևողական կեղեքման չէին ենթարկվում, սակայն ստիպված էին հատուկ հարկ վճարել, զուրկ լինել զենք կրելու կամ բարձր վարչական ու զինվորական պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունից: Նրանց վկայություններն ընդունելի չէին դատարաններում և այլն: Այսպես՝

Until the beginning of the nineteenth century  
Armenians had not suffered from any systematic op-

pression. They were second-class citizens who had to pay special taxes and wear a distinctive hat, they were not allowed to bear or possess arms, their testimony was often rejected in the courts, and they were barred from the highest administrative or military posts. The term *gavur or kafir (meaning unbeliever or infidel) used for Christians had definite pejorative overtones and summed up the Muslim outlook*. Still, as Ronald Suny has noted, despite all discriminations and abuses, for several centuries the Armenians had derived considerable benefit from the limited autonomy made possible by the *millet* system (p. 4)<sup>4</sup>.

Հատվածում մանրամասն ներկայացվում է հայերի սոցիալական կացությունը, թուրքերի վերաբերմունքը «անհավատների» նկատմամբ: *Gavur* կամ *kafir* բառերը, որոնք ակնհայտ բացասական առնչանակային երանգավորում ունեցող «ախտակներ» են, վերագրվում էին հայերին, ինչպես նաև Օսմանյան կայսրության ենթակայության տակ գտնվող քրիստոնյա մյուս էթնիկ միավորներին՝ հույներին, ասորիներին, բուլղարացիներին, սերբերին: Տեքստ ներմուծելով *gavur* բառի անգլերեն *unbeliever, infidel* հոմանիշ միավորները, որոնք նույնպես բացասական նշանակություն ունեն (մասնավորապես, օրինակ՝ *infidel - an offensive way of referring to sb who does not believe in what the speaker considers to be the true religion*)<sup>5</sup> և ըստ Վիքիպեդիա հանրագիտարանի՝ լայնորեն կիրառվում են մահմեդականների կողմից՝ քրիստոնյա ազգերին բնորոշելիս,<sup>6</sup> Լյուին, փաստորեն, հաստատագրում է ստորացման ու նվաստացման այն մթնոլորտի առկայությունը, որում հայերը ապրում էին Օսմանյան կայսրությունում: *Gavur* միավորը, որը դեռևս XVI դարի կեսերին շրջանառության մեջ մտած *kāfir*<sup>7</sup> արաբերեն բառի թուրքերեն տարբերակն է, ժամանակակից թուրքերենում էլ կիրառվում է նույն նշանակությամբ, ինչ *infidel* բառը<sup>8</sup> և ունի գրության մի քանի տարբերակ (*giaour, gavur* or *ghiaour*): Այսպիսով, *gavur, kafir, unbeliever,*

<sup>4</sup> «Մինչև տասնիններորդ դարի սկիզբը հայերը չէին տառապել որևէ համակարգված կեղեքումից: Նրանք երկրորդ կարգի քաղաքացիներ էին, որոնք ստիպված էին վճարել հատուկ հարկեր և կրել ուրիշներից իրենց տարբերող գլխարկ, նրանց թույլ չէին տալիս կրել կամ ունենալ զենքեր, նրանց վկայությունը հաճախ մերժվում էր դատարաններում, և նրանց արգելում էին զբաղեցնել բարձրագույն վարչական կամ զինվորական պաշտոններ: Գյավուր կամ քաֆիր եզրույթը (նշանակում է անհավատ կամ անհավատարիմ), որը կիրառվում էր քրիստոնյաների առնչությամբ, որոշակի նվաստացուցիչ երանգ ուներ և մահմեդականների ընդհանրացված կարծիքն էր խտացնում իր մեջ: Այնուամենայնիվ, ինչպես Ռոնալդ Սունին է նշել, չնայած բոլոր խտրականություններին և չարաշահումներին, հայերը մի քանի դար շարունակ զգալի օգուտ են քաղել միլլեթ համակարգի գործարկման արդյունքում իրենց ընձեռված սահմանափակ ինքնավարությունից»:

<sup>5</sup> Տե՛ս "Oxford Advanced Learner's Dictionary", Oxford - New York, Oxford University Press, 2001, էջ 665:

<sup>6</sup> Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Infidel>

<sup>7</sup> Արաբերեն *kāfir* բառը մեկնաբանվում է որպես "unbeliever, infidel" (տե՛ս «Encarta World English Dictionary» [North American Edition], Microsoft Corporation, 2007):

<sup>8</sup> Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Giaour>

*infidel* միավորների իմաստային դաշտերը հատվում են և ունեն վառ արտահայտված բացասական առնչանակային երանգավորում:

Այսուհանդերձ, Լյուիին, կարծես, չի էլ հետաքրքրում այն հանգամանքը, որ հազարամյակներ շարունակ իրենց պապերի հողում ապրող, հարուստ քաղաքակրթություն կերտած, ստեղծագործական կարողություններով օժտված և, ի վերջո, տարածաշրջանի շարժիչ ուժը հանդիսացող հայերը որակվում են որպես երկրորդ կարգի քաղաքացիներ, որոնք, թուրքի ընկալմամբ, այլևս ժողովուրդ չէին, այլ «ազգային փոքրամասնություն», որի իրավունքները կարելի էր ոտնահարել ամեն քայլափոխի: Մի՞թե հասկանալի չէ, որ նրանց նկատմամբ իշխանությունների սերմանած թշնամանքի հետևանքով հասարակական գիտակցության մեջ պիտի արմատավորվեր փոքրամասնությունների՝ որպես «իրավազուրկ օտարների» ընկալումը<sup>9</sup>, իշխանությունների նախապես ծրագրված գործունեությունը հասներ իր նպատակակետին, և հայերն ազգային փոքրամասնության կարգավիճակից, ըստ թուրքական որակման, վերածվեին հասարակության ընդհանուր թշնամու և մյուս ազգային փոքրամասնությունների հետ միասին դիտվեին որպես կայսրության անվտանգությանը սպառնացող տարր: Իսկ հողային կորստի համախտանիշով տառապող իշխանություններն արդեն ամրագրել էին այն սկզբունքը, որ մշտական սպառնալիք ներկայացնող ազգային փոքրամասնությունները, այդ թվում՝ հայերը, մեղմ ասած, չպետք է գոյատևեին ու բազմանային: Նման քաղաքականությունը, անշուշտ, նրանց հոգիներում պիտի ծներ կայսրությունից անկախանալու ձգտում: Պատահական չէ Հ. Դինքի այն բնութագրությունը, թե «հայ ազգը այդ տարածքներում ապրող ժողովուրդներից ամենավերջինն արթնացող ու ամենամեծ վնասը կրողն էր... Հայերը իրենց ողբերգությամբ, կարծես, վճարեցին Օսմանյան կայսրությունից անջատված բոլոր ժողովուրդների փոխարեն»<sup>10</sup>:

Լյուին, իհարկե, չէր կարող չընդգծել երևույթի բացասական երանգավորումը, սակայն սրանով հաներձ, մեջբերելով Ռ. Սյունիի տեսակետը, նա փորձում է համոզել իր անտեղյակ ընթերցողին, որ հայերը դարեր շարունակ մեծապես օգտվել են Օսմանյան կայսրության բարեգթությունից, թեև նրանց ինքնավարությունը եղել է սահմանափակ (*for several centuries the Armenians had derived considerable benefit from the limited autonomy made possible by the millet system*), և այս անամպ երկնքում սև ամպերը սկսել են կուտակվել Բուլղարիայի ազատագրական պայքարի և Ռուսաստանի միջամտության հետևանքով:

Matters came to a head in the wake of the Bulgarian revolt against Ottoman rule in 1876. Reports reaching

<sup>9</sup> Այդ մասին է վկայում, օրինակ, «հայի բիճ», «հայի լաճ» և նման այլ վիրավորական արտահայտությունների ներմուծումը առօրյա խոսակցական լեզու (Հ. Դինք, Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, թարգմ.՝ Մ. Սոմունջյան, Եր., 2009, էջ 58), իսկ «գյավուրների» նկատմամբ անսքող արհամարհանքն ու թշնամանքը թափանցել են նույնիսկ թուրքական առածներ, ասացվածքներ ու երգեր (տես **Гордлевский В.** Из истории османской пословицы и поговорок // "Живая старина". Вып. II–III, М., 1909, էջ 116):

<sup>10</sup> Հ. Դինք, նշվ. աշխ., էջ 59:

the West about the ferocious manner in which the rebellion had been suppressed helped solidify *the image of the “terrible Turk”*. Russian public opinion clamored for help to the Southern Slavs, and in April 1877 Russia declared war upon Turkey. The commander of the Russian army invading eastern Anatolia was a Russian Armenian, Mikayel Loris-Melikov (his original name was Melikian). The Russian troops included many Russian Armenians; Armenians from Ottoman Anatolia were said to have acted as guides. The spread of pro-Russian sentiments among the Armenians of Anatolia, who hoped that Russia would liberate them from the Turkish yoke, was well known. All this **alarmed** the Ottoman government and **raised doubts about the reliability of the Armenians**. The transition from “the most loyal *millet*” to a people **suspected to be in league with foreign enemies** was complete (p. 7)<sup>11</sup>.

Ինչպես երևում է հատվածի համատեքստից, նա հենց բուլղարացիների ապստամբությամբ, հայ-ռուսական հարաբերություններով և հայերի ազատագրման փափագով է մեկնաբանում «հանդուրժող» թուրքի կերպարի աստիճանական անհետացումը և «սարսափելի թուրք» (terrible Turk) գաղափարի ի հայտ գալը: Հանդես գալով իր թուրքամետ դիրքերից՝ Լյուին այս իրողությունը անհանդուրժելի է համարում Թուրքիայի համար և հանդգնած է, որ հենց օտար տարրի միջամտությունն էր, որ ստիպեց թուրքական կառավարությանը անվստահությամբ լցվել հայերի հանդեպ: Դա հատկապես ընդգծվում է հեղինակի այն ասույթում, որտեղ ուշադրություն են գրավում *կասկած* և *անհանգստություն* արտահայտող միավորները (**alarmed, raised doubts about the reliability of the Armenians, suspected to be in league with foreign enemies**): Փաստորեն, ասույթում անուղղակիորեն մեղմացվում է Օսմանյան կայսրության մեղսագործությունը: Հեղինակը հաշվի չի առնում, որ մարդկության դեմ գործված ոճիրը ոչ մի պարագայում մեղմացուցիչ դեպք հանցանաց չունի և չի կարող ունենալ:

---

<sup>11</sup> «Խնդիրները սրվեցին օսմանյան իշխանության դեմ 1876 թվականին ծագած բուլղարական ապստամբությունից հետո: Ապստամբությունը ճնշելու համար գործադրված վայրագ միջոցների մասին տեղեկությունները, որոնք Արևմուտք էին հասնում զեկույցների տեսքով, օգնեցին հաստատագրելու «սարսափելի թուրքի» կերպարը: Ռուսական հասարակական կարծիքը մեծ աղմուկ էր բարձրացրել հարավային սլավոններին օգնություն ցուցաբերելու հարցի շուրջ, և 1877 թվականի ապրիլին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Ռուսական բանակի հրամանատարը, որը ներխուժեց արևելյան Անատոլիա, ռուսահայ էր՝ Միքայել Լորիս-Մելիքով (նրա իսկական ազգանունը Մելիքյան էր): Ռուսական զորքերի մեջ շատ ռուսահայեր կային: Ասում են, որ օսմանյան Անատոլիայի հայերը առաջնորդների դեր էին կատարել: Ռուսամետ տրամադրությունների տարածումը Անատոլիայի հայերի շրջանում, որոնք հույս ունեին, որ Ռուսաստանը կազատագրեր իրենց թուրքական լծից, հայտնի էր: Այս ամենն ահազանգ դարձավ օսմանյան կառավարության համար և կասկածի տակ դրեց հայերի հուսալիությունը: «Ամենահավատարիմ միլլեթը» լիովին վերածվեց օտար թշնամիների հետ միաբանելու մեջ կասկածվող մարդկանց խմբի»:

Օսմանյան կայսրության լծից ազատվելու հայերի երազանքի շեշտադրում կա նաև Լյուիի հետագա դատողություններում: Այսպես՝

The *new friendly relations* between the Dashnaks and the CUP survived even a new massacre of Armenians in Adana and other parts of Cilicia that took place in the wake of a conservative countercoup in April 1909. For some time, it appears, the leader of the Armenian community of Adana, **Archbishop Musheg, had urged his people to acquire arms, had voiced chauvinistic ideas, and had engaged in what was perceived as contemptuous behavior toward the Muslim** (p. 33)<sup>12</sup>.

Գ. Լյուին ջանում է հարցն այնպես ներկայացնել, թե իբր դաշնակցական հայերի և երիտթուրքերի բարիդրացիական հարաբերությունները շարունակում էին կայուն մնալ նույնիսկ Ադանայում և Կիլիկիայի այլ մասերում 1909 թվականի ապրիլին տեղի ունեցած ջարդերից հետո<sup>13</sup>: Սակայն հայերը Ադանայի եպիսկոպոսի գլխավորությամբ ժողովրդի մեջ աստելություն էին սերմանում մահմեդականների նկատմամբ, կոչ անում կռվել, պայքարել նրանց դեմ (**Archbishop Musheg, had urged his people to acquire arms, had voiced chauvinistic ideas, and had engaged in what was perceived as contemptuous behavior toward the Muslim**): Ասույթը բացահայտում է Լյուիի «համոզմունքն» այն մասին, որ 1909 թ. սկսած հայերը ռազմական գործողություններ էին ծավալել երիտթուրքական կառավարության դեմ: Սակայն նա փորձում է անտեսել հարցի մյուս կողմը. հայերի գիտակցության մեջ աստիճանաբար անվստահություն էր ձևավորվում ապագայի հանդեպ, քանի որ նրանք սեփական մաշկի վրա էին զգում անարդար վերաբերմունքի հետևանքները: Ստեղծվել էր մի իրադրություն, երբ հայը խորապես գիտակցում էր, որ ամեն պահի կարող է դեմ հանդիման կանգնել սպառնալիքի առաջ: Հայերի նկատմամբ պետության վարած չիուսադրող քաղաքականությունը, սեփական հողում օտար, իրավազուրկ լինելու անառողջ հոգեվիճակը, նվաստացնող վերաբերմունքը և յուրաքանչյուր վտանգի հետևում հայկական ձեռագիր փնտրելու իշխանությունների միտումը էլ ա-

<sup>12</sup> «Ռաշնակների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության միջև նոր բարեկամական հարաբերությունները պահպանվեցին նույնիսկ Ադանայում և Կիլիկիայի այլ տարածքներում հայերի նոր կոտորածից հետո, որը տեղի ունեցավ 1909 թվականի ապրիլին պահպանողականների իրականացրած հակահեղաշրջման հետևանքով: Պարզվում է, որ որոշ ժամանակ Ադանայի հայկական համայնքի առաջնորդը՝ արքեպիսկոպոս Մուշեղը, կոչ էր արել իր մարդկանց ձեռք բերել զենքեր, շովինիստական գաղափարներ էր արտահայտել, և դրսևորել էր այնպիսի վարքագիծ, որն ընկալվում էր որպես արհամարհական վերաբերմունք մահմեդականների նկատմամբ»:

<sup>13</sup> Սակայն, ինչպես ցույց են տալիս հայոց իրական պատմության տարբեր աղբյուրներում առկա և բազմաթիվ ականատեսների վկայությունների վրա հիմնված փաստերը, Կիլիկիայի զանգվածային կոտորածներն արդեն բացահայտել էին, որ երիտթուրքերի սահմանադրական կառավարությունը սուլթանական թուրքիայի արժանի ժառանգորդն էր, և 1909 թվականի ապրիլյան նշված ջարդերից հետո բարիդրացիական հարաբերությունների մասին այլևս խոսք չիմեղ չէր կարող (տե՛ս **Հ. Սիմոնյան**, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009):

վելի էին սաստկացնում արժանապատվության զգացումով տոգորված հայի ազատատենչ փափագը և մղում նրան ինքնապաշտպանական գործողությունների<sup>14</sup>:

Անդրադարձ կատարելով Չայոց ցեղասպանության և հրեաների Չոլոքոստի առնչությամբ՝ Գ. Լյուին հերքում է, որ Չիտլերը հրեաների Չոլոքոստը ձեռնարկեց՝ հետևելով օսմանյան կառավարության իրականացրած ջարդերին: Այս հերքման կարևոր պնդումն այն է, որ չկան համապատասխան ապացույցներ կամ փաստեր, որ Չիտլերը արտաբերել է հետևյալ բառերը. *"Who still talks nowadays of the extermination of the Armenians?"*: Այսպես՝

In the context of outlining Germany's need for Lebensraum (vital space) and the destruction of people standing in the way of this expansion Hitler is supposed to have said: *"Who still talks nowadays of the extermination of the Armenians?"* **This statement is frequently quoted to suggest** that Hitler felt encouraged to pursue his plan to exterminate the Jews of Europe because the world did not punish the Ottoman Turks for their annihilation of the Armenians (p.264-265)<sup>15</sup>.

XX դարի առաջին ցեղասպանության և հրեաների Չոլոքոստի միջև կապը հերքող Լյուին, իհարկե, անտեղյակ չէ Չիտլերի այն հայտարարությամբ, որտեղ նա խոստովանում է լեհալեզու հրեաներին բնաջնջելու ճանապարհով Գերմանիային անհրաժեշտ կենսոլորտ ապահովելու իր մարմաջը՝ հուսալով, որ ինչպես այսօր չի հիշվում հայերի ցեղասպանությունը, այնպես էլ վաղը կմոռացվի հրեաներին: Սակայն Լյուին չի հետաքրքրում ո՛չ Բեռլինի անգլիական պաշտոնյա Ժորժ Օլիվիա Ֆորբեսի՝ Անգլիայի արտաքին գործոց նախարարություն ուղարկած հեռագիրը, որտեղ հիշատակվում էին Չիտլերի բառերը<sup>16</sup>, ո՛չ այն փաստը, որ նույն տեղեկությունը ստացել էր նաև "Associated

<sup>14</sup> Պատահական չպետք է համարել Ջորավար Անդրանիկի՝ թուրքին տված որակումը. «Ոչ մի թուրքի չեն կարող հավատալ, եթե երկնքից իջած լինի, պետք է սրով հասկացնել թուրքին, որ իրավունք չունի ուրիշի սեփականությունը կողոպտելու, մարդկանց և ամբողջ ժողովուրդի արդար իրավունքները բռնաբարելու» (Ա. Կալայջյան, Թուրք թուրանական ծավալապաշտությունը և 70 նահատակ ազգերը. պատմություն և հեռանկարներ, Եր., 2008):

<sup>15</sup> «Գերմանիայի կենսոլորտի անհրաժեշտության նախանշումների և դրանց բռնի իրագործումը խոչընդոտող ժողովուրդների ոչնչացման համատեքստում Չիտլերը, ինչպես ենթադրում են, ասել է. «Այժմ ո՞վ է խոսում հայերի բնաջնջման մասին»: Այս հայտարարության հաճախակի մեջբերումը այն ակնարկն ունի, թե Չիտլերը քաջալերված էր հետամուտ լինելու Եվրոպայի հրեաների ոչնչացման իր ծրագրին, որովհետև աշխարհը չէր պատժել օսմանյան թուրքերին հայերին բնաջնջելու համար»:

<sup>16</sup> 1939 թ. օգոստոսի 22-ին լեհ-հրեաների՝ իր հաշվեհարդարի ծրագիրը ներկայացնելիս Չիտլերը նշում է, որ հրահանգ է տվել մահապարտների իր միավորումներին անողորմաբար և առանց խղճալու բնաջնջել լեհական ծագում ունեցող հրեա տղամարդկանց, կանանց և երեխաներին, քանի որ միայն այդ ձևով կարող են ապահովել այն կենսոլորտը (Lebensraum), որի կարիքն իրենք ունեն: Եվ հենց այս համատեքստում է, որ նա Չայոց ցեղասպանության առնչությամբ արտասանում է հետևյալ բառերը. «Ի



Press"-ի ամերիկյան գործակալության ներկայացուցիչ Մ. Լոները գերմանական գլխավոր շտաբի մի գեներալից, ո՛չ էլ այն, որ «Նյու Յորք Թայմս» թերթի 1945 թ. նոյեմբերի 24-ի համարում հրատարակվել էր այդ տեղեկությունը<sup>17</sup>: Այս հերքումն անկասկած ունի իր պատճառները. Լյուին, մեղմ ասած, կան ձգտում է արժանանալ թուրքամետների շոյանքների<sup>18</sup>, կան «արյան կանչով» հետամուտ է իսրայելական պաշտոնական շրջանակների որդեգրած «բացառիկության» տեսակետին<sup>19</sup>:

Նա «համոզված է» իր դատողությունների «ճշմարտացիությանը», և հենց այդ է պատճառը, որ հետագա շարադրանքում նշում է.

Other scholars have lined up on one side or the other of this controversy which *must be regarded as irresolvable*. The Armenian *attempt* to see in this purported remark by Hitler a link between the Armenian massacres and the Jewish Holocaust therefore *stands on a shaky factual foundation* (p. 265)<sup>20</sup>.

Այստեղ էլ Լյուին ջանում է իր կարծիքը պարտադրել ընթերցողին: Շեշտադրելով, որ Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի առնչության խնդիրն անհիմն է՝ նա *must* եղանակավորող բայի գործածությամբ իր ժխտողական վերաբերմունքն է ներմուծում համատեքստ և ասույթին բացասական երանգներ հաղորդում՝ իր միտքը եզրափակելով *shaky fact-*

---

վերջո, այսօր ո՞վ է խոսում հայերի բնաջնջման մասին» (տե՛ս P. Lochner, What about Germany? New York, Dodd, Mead & Co., 1942): Հետագայում 1945 թ. սկսված Նյուրնբերգյան դատավարությունը այդ արձանագրությունը ճանաչեց որպես L-3 Exhibit USA-28 (փաստաթղթի գերմաներեն բնագիր տարբերակը տե՛ս "Akten zur Deutschen Auswärtigen Politik 1918-1945", Serie D, Band VII, (Baden-Baden 1956), pp.171-172: [www.armenian.genocide.org/hitler.html](http://www.armenian.genocide.org/hitler.html), նաև Ա. Կալայջյան, նշվ. աշխ., էջ 273):

<sup>17</sup> Հիտլերի այս արտահայտությանը անդրադարձ է կատարել նաև ամերիկացի հայտնի պատմաբան Ջոզեֆ Գոդմանը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իր «Հայոց ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմում» գրքում՝ ընդգծելով և զուգահեռներ անցկացնելով նացիստական և թուրանական ոճիրների միջև (տե՛ս Ա. Կալայջյան, նշվ. աշխ., էջ 274):

<sup>18</sup> Այս առումով հետաքրքրական են Ֆաթիհ Բալչըի և Արիֆ Աբգուլի գովասանքի խոսքերը Լյուիի գրքի վերաբերյալ, որը նրանց որակմամբ «անաչառ է», «զերծ գեղծարարությունից», «հիմնված պատմական փաստերի վրա», «ճշմարտության մարմնավորում» (տե՛ս F. Balci, A. Akgul, Book Review: The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide // The Journal of Turkish Weekly. [www.turkishweekly.net/article/186](http://www.turkishweekly.net/article/186)): Սակայն, ըստ Ջ. Ա. Քեչիչյանի փոխանցած տեղեկության՝ Լյուին շռայլորեն կաշառվել է թուրքական իշխանությունների կողմից և, որ անենագավելչտական է, ստացել է նաև պարզև՝ «Մարդկության դեմ գործած հանցագործությունների դեմ պայքարելու համար»: <http://www.turish-weekly.net/article/186/book-review-the-armenian-massacres-in-ottoman-turkey-a-disputed-genocide>

<sup>19</sup> 2001 թ. ապրիլի 10-ին "Turkish Daily News" օրաթերթը հրապարակեց Իսրայելի արտգործնախարար (ներկայիս նախագահ) Շիմոն Պերեսի հայտարարությունն այն մասին, որ ինքը որևէ կապ չի տեսնում հրեական Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության մասին առաջ քաշված վկայությունների միջև. «Հոլոքոստը հիշեցնող որևէ բան առայժմ չի եղել: Այն, ինչի միջով անցել են հայերը, ողբերգություն է, բայց ոչ ցեղասպանություն»: [http://www.turkishdailynews.com/old\\_editions/04\\_10\\_01/for.htm#f6](http://www.turkishdailynews.com/old_editions/04_10_01/for.htm#f6)

<sup>20</sup> «Այլ գիտնականներ այս անլուծելի տարակարծության մեկ կամ մյուս կողմն են պահում: Հիտլերի կողմից արված այս ակնարկում հայերի բնաջնջման և հրեաների Հոլոքոստի միջև կապ տեսնելու հայերի փորձը, հետևաբար, փաստական հիմքեր չունի»:

*tual foundation* արտահայտությամբ, որով և փորձում է ընդգծել հայ պատմաբանների՝ ցեղասպանության վերաբերյալ ունեցած փաստերի «անկայուն» կամ «ոչ հավաստի» լինելը: Ըստ հեղինակի՝ դա պարզապես հայերի փորձն է (*attempt*) կապելու հրեաների և հայերի ցեղասպանությունները: Սակայն մի՞թե այս առնչության ընդունումը կամ հերքումն է ամենաէականը: Մի՞թե Լյուիի նման «ազնիվ» և «ճշմարտությանը» հետամուտ «գիտնականի» համար ամենից կարևորը մարդկության դեմ գործված ամեն տեսակի ցեղասպանական ոճիրները դատապարտելը չէ:

**I start with the assumption** that the various decrees issued by the government in Constantinople dealing with the deportation and its implementation are **genuine** and were issued in **good faith**. The Ottoman Government, **I am inclined to believe, wanted to arrange** an orderly process but did not have the means to do so (252)<sup>21</sup>.

Հեղինակը հետևողական է ներշնչման և համոզման իր ռազմավարությունը իրականացնելու գործում: Նա ամեն կերպ փորձում է ներկայանալ չեզոք դիրքերից, սակայն կանխակալ ենթադրությունը ձևավորել է համոզմունք, որը, ըստ նրա, հիմնվում է պաշտոնական փաստաթղթերում առկա տեղեկությունների վրա (decrees issued by the government in Constantinople):

Ներշնչման իր ռազմավարությունը հեղինակն իրագործում է "I" անձնական դերանվան կիրառությամբ, որը ասույթի՝ գործաբանական արժեք ունեցող կարևոր տարրերից է: Ու թեև անձնական դերանվան առաջին դեմքի եզակի փյի "I" ձևի առկայությունը ասույթի "I start with the assumption" ~ "I am inclined to believe" հատվածներում պետք է որ ուղղակիորեն հստակ սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտեր, այդուհանդերձ դրա զուգակցումը առաջին դեպքում "assumption" գոյականի, իսկ երկրորդում՝ "to be inclined" բայական ձևի հետ զգալիորեն մեղմում է հեղինակի սուբյեկտիվ գնահատողական վերաբերմունքի բացահայտ դրսևորումն ու առերևույթ թողնում այսպես կոչված կանխակալ չեզոքության տպավորություն: Պաշտոնական փաստաթղթերն են նրան «կողմնորոշում հավատալու», թե Կոստանդնուպոլսի կառավարությունը մեծապես հակված էր կարգավորելու հայերի անկայուն դրությունը, բայց, ավաղ, ի զորու չեղավ իրականացնելու այն:

Հատվածում "wanted to arrange" ազատ բառակապակցության մեջ "want" միավորի կիրառությունը սոսկական նշանակությամբ կարծես ներշնչում է ընթերցողին հավատալու, որ իբր օսմանյան կառավարությունը իրոք ունեցել է հայ ժողովրդին աջակցելու ցանկություն, բայց չի կարո-

---

<sup>21</sup> «Ինձ համար ելակետային է այն ենթադրությունը, որ տեղահանման և դրա իրագործման հետ կապված՝ Կոստանդնուպոլսում կառավարության օրինագրած տարբեր հրամանները, իրոք, արտահայտում են կառավարության հենց այդ միտումները և բարի կամքի դրսևորում են: Ես հակված եմ հավատալու, որ օսմանյան կառավարությունը ցանկանում էր կազմակերպել կանոնավոր գործընթաց, սակայն դա անելու միջոցներ չունեի»:

ղացել դա անել միջոցների բացակայության պատճառով: Դեռ ավելին՝ ասույթի սոսկական մթնոլորտը ընդգծվում է համատեքստում առկա **genuine** և **good faith** միավորներով, որոնց գործածությամբ հեղինակը փորձում է դրական առնչանակային երանգներով օժտել տեքստը ու հավատացնել ընթերցողին, որ օսմանյան կառավարության նպատակը հայերի նկատմամբ «բարի կամք» դրսևորելն էր:

Գրքի մի այլ հատվածում հեղինակը փորձում է հավասար նժարների վրա դնել Օսմանյան կայսրության կողմից եղեռնագործված հայ բնակչության անասելի տառապանքները և համաճարակից ու սովից տուժած թուրք քաղաքացիների վիճակը, համապատասխան բժշկական օգնություն չստացած թուրք զինվորների կորուստը: Նա «համոզված է», որ Օսմանյան կայսրությունը չէր կարող դիտավորյալ ահ ու սարսափի մեջ գցել իր իսկ քաղաքացիներին: Այսպես՝

*Large numbers of Turkish civilians* died as a result of severe shortages of food and epidemics; *large numbers of Turkish soldiers*, especially the wounded in battle, perished for lack of adequate medical care and as a result of neglect and incompetence on the part of their own officers; and *large numbers of British prisoners* of war lost their lives as a consequence of inattention and the kind of gross mismanagement rampant in the Ottoman regime. Yet these results surely do not prove that the Ottoman government – ultimately responsible for all of these conditions – **sought and intentionally caused the death of its own civilian population, of its own soldiers and of its prisoners of war** (p. 54)<sup>22</sup>.

Հատվածում շեշտադրվում է, որ Օսմանյան կայսրությունը չէր կարող պատասխանատու լինել հայերի ջարդերն իրականացնելու համար, քանի որ թուրք ազգը՝ զինվորները, խաղաղ քաղաքացիները, նույնպես «տառապյալների շարքում էին»: Հենց այստեղ է բացահայտվում ասույթի պերսուազիվ բնույթը՝ *own* (*սեփական, իր իսկ*) միավորի կրկնակի գործածությամբ *own civilian population, own soldiers* բառակապակցություններում: Ուշադրություն է գրավում նաև հարակրկնության գործածությունը (*Large numbers of Turkish civilians, large numbers of Turkish soldiers, large numbers*

<sup>22</sup> «Մեծ քանակությամբ թուրք քաղաքացիներ մահացան սննդի խիստ պակասի և համաճարակի հետևանքով: Մեծ քանակությամբ թուրք զինվորներ, հատկապես ճակատամարտում վիրավորվածները, մահացան համապատասխան բժշկական խնամքի բացակայության և իրենց սեփական պաշտոնյաների արհամարհանքի ու անգիտության պատճառով, և բրիտանացի մեծաքանակ ռազմագերիներ իրենց կյանքը կորցրին օսմանյան վարչակարգում տիրող անուշադրության և վատ կառավարման հետևանքով: Այսուհանդերձ, այս արդյունքները վստահաբար չեն ապացուցում այն փաստը, որ օսմանյան կառավարությունը, որը վերջին հաշվով պատասխանատու էր այս բոլոր պայմանների համար, միտումնավոր կերպով հրահրեց իր սեփական բնակչության, իր զինվորների ու ռազմագերիների մահը»:

of British prisoners), որը, խոսքի ոճավորման կարևորագույն հնար լինելուց զատ, նաև միտված է ավելի թանձր գույներով ներկայացնելու ճգնաժամ ապրող կայսրության վիճակը:

Շարադրանքի մեկ այլ հատվածում Գ. Լյուին նշում է.

*While the Armenians were victims, not all of them were innocent victims; and the disaster that overtook them therefore was not entirely unprovoked. Most importantly, while the Ottoman government bears responsibility for the deportations that got badly out of hand, the blame for the massacres that took place must be primarily on those who did the actual killing (p. 257)<sup>23</sup>.*

Հատվածի "*While the Armenians were victims, not all of them were innocent victims*" ասույթն ըստ էության խիտ ու ամփոփ արտահայտում է Լյուիի՝ հայերի մեջ մեղավորներ փնտրելու արատավոր դիրքորոշումը: Ինչպես հասկանալի է հատվածի առավել լայն հորիզոնական համատեքստից, հայերի մեղավորությունն այն էր, որ իրենց կյանքի փրկության համար նրանք ելք էին փնտրում՝ հայացքն ուղղելով մեկ դեպի արևմուտք, մեկ դեպի Ռուսաստան: Իսկ երիտթուրքերի վարչակարգը, Լյուիի ընկալմամբ, ընդամենը գերագնահատել էր իր հեռատեսությունը (*exaggerated farsightedness of the Young Turk leadership*) և բացահայտել իր՝ ճիշտ ժամանակին հասուն որոշումներ կայացնելու անկարողությունը (*ineptness*): Մեղմասական ինչպիսի ջանքերի գործադրում թուրքական վարչակարգի վայրագ նպատակները սքողելու համար: Քիչ է մնում ընթերցողի հոգում կարեկցանք ծնվի թուրքերի նկատմամբ, որոնք, ցավոք, չկարողացան հայերին ավելի ապահով բնակավայրեր տեղափոխելու իրենց «բարեգութ» ծրագիրն իրականություն դարձնել: Նույնիսկ այն փաստը, որ երիտթուրքական մուեռանդ պաշտոնյաներից ոմանք ողջունել էին այդքան մեծ թվով հայերի ոչնչացումը, Լյուիի կարծիքով, թույլ չի տալիս խոսելու հայերին բնաջնջելու նրանց կանխակալ մտադրությունների մասին:

Հետևողականորեն կիրառելով ընթերցողի «աչքերին թոզ փչելու» իր ռազմավարությունը՝ Լյուին չի խորշում անգամ զուգահեռներ անցկացնել կանխապես ծրագրված ցեղասպանական վայրագություններին զոհ գնացած միլիոնավոր հայերի և պատերազմական գործողությունների հետևանքով տուժած վիրավոր զինվորների, փախստականների ու ռազմագերիների միջև, որոնց նկատմամբ կառավարությունը անկարող էր գտնվել դրսևորելու համապատասխան վերաբերմունք (*badly mishandled its wounded soldiers, refugees and prisoners of war*): Մերթ ընդգծելով, որ անկա-

---

<sup>23</sup> «Չնայած հայերը զոհեր էին, նրանցից ոչ բոլորն էին անմեղ զոհեր, և այդ հանկարծահաս աղետը նրանց հետ կատարվեց ոչ առանց դրդապատճառների: Իսկ ամենակարևորն այն է, որ թեև օսմանյան կառավարությունը պատասխանատու է տեղահանությունների համար, որոնց ընթացքը, ցավոք, դուրս եկավ նրա հսկողությունից, սակայն տեղի ունեցած ջարդերի մեղքը պետք է ընկնի նախ և առաջ նրանց վրա, ովքեր կատարել են բուն սպանությունը»:

րելի է անտեսել ու անուշադրության մատնել հայերի գլխով անցած սարսափները (*it is impossible to ignore the horrors to which the Armenians were subjected*), մերթ էլ շեշտադրելով այդ սարսափելի իրադարձությունները բուն պատմական համատեքստում դիտարկելու անհրաժեշտությունը (*it is important to see these terrible events in their proper historical context*)՝ Լյուին ջանում է համոզել իր ընթերցողին, որ հենց ինքն է պատմական բուն ճշմարտությանը հետամուտ ուսումնասիրողը, և որ թուրքահայ համայնքի հետ կատարվածը տեղի էր ունեցել պատմական այնպիսի խուճապալի ժամանակաշրջանում (*the order for the deportation of the Armenian community was issued at a time of great insecurity, not to say panic*), երբ հայերի ապահով տեղահանությունը կարող էր անհնարին դառնալ, քանի որ դժվար էր հետևանքների մասին ճշգրիտ հաշվարկներ անել: Նա վստահ է, իհարկե, որ օսմանյան կառավարությունը ինչ-որ պատասխանատվություն կրում է տեղահանությունների համար, քանի որ անկարող եղավ իր տեսադաշտում պահելու դրանց ընթացքը, սակայն ջարդերի մեղքը ոչ թե կառավարությանն է, այլ բուն սպանող իրականացնողներինը:

Պատահական չէ, հետևաբար, որ հեղինակը կտրականապես հրաժարվում է ցեղասպանություն (genocide) եզրույթի գործածությունից: Այսպես՝

*Finding a man with a smoking gun standing next to a corpse tells us nothing about the motive for the killing - it may have been murder or a case of self-defense. Indeed, we cannot even be sure that this man is the killer. Similarly, the fact that large numbers of Armenians died or were killed during the course of the deportations can give us no reliable knowledge of who is to be held responsible for these losses of life. **The high death toll** certainly does not prove in and of itself the guilt of the*

*Young Turk regime; nor can we infer from it that the deaths were part of a genocidal plan to destroy the Turkish Armenian community (p. 54) <sup>24</sup>.*

Հատվածը ներկայացնում է ևս մի պերսուազիվ ասույթ. նախ՝ հեղինակը փորձում է համոզել, որ դիակի կողքին ատրճանակը ձեռքին մարդու առկայությունը դեռ չի նշանակում, որ տվյալ անձը մարդասպան է, ապա նորից ու նորից շեշտադրում, որ Օսմանյան կայսրությունը որևէ առնչու-

<sup>24</sup> «Դիակի կողքին մխացող հրացանը ձեռքին մարդու առկայությունը սպանության դրդապատճառի մասին մեզ ոչինչ չի ասում. դա կարող էր սպանության կամ ինքնապաշտպանության դեպք լինել: Եվ, իրոք, մենք չենք կարող նույնիսկ համոզված լինել, որ այդ անձն է մարդասպանը: Նմանապես, այն փաստը, որ մեծ թվով հայեր մահացան կամ սպանվեցին տեղահանությունների ընթացքում, ոչ մի հավաստի տեղեկություն չի կարող տալ, թե ում պիտի պատասխանատու համարենք այդ կյանքերի կորստի համար: Աղետյալների մեծ քանակությունը, անշուշտ, ինքնին չի ապացուցում երիտթուրքերի վարչակարգի մեղքը, ոչ էլ դրանից կարող ենք հետևություն անել, որ այդ մահերը թուրքահայ համայնքը ոչնչացնելու ցեղասպանական ծրագրի մի մասն էին»:

թյուն չունենալ և չէր կարող ունենալ հայերի ջարդերի հետ, քանի որ հայերը մահացել են զանգվածային տեղահանությունից: Դեռ ավելին՝ հեղինակը կիրառում է *the high death toll*<sup>25</sup> (մեծաքանակ աղետյալներ) արտահայտությունը՝ խույս տալով *ցեղասպանություն (genocide)* եզրույթի կիրառությունից: Եթե զուգահեռ ենք *death toll* և *genocide* միավորները, ապա կտեսնենք, որ *death toll*-ը ունի *պատերազմի կամ այլ աղետի պատճառով կատարված պատահարի* նշանակությունը, որը ոչ մի կապ չունի *ցեղասպանություն* միավորի իմաստային դաշտի հետ, քանի որ այն բացառում է մտադրվածության գործոնի առկայությունը<sup>26</sup>: Փաստորեն, ըստ Լյուիի մատուցման, հայերի հետ կատարվածը լոկ «դժբախտ պատահար» էր և չէր առնչվում Օսմանյան կայսրության անցուդարձի հետ:

Սակայն բազմաթիվ այլ վկայությունների շարքում հայտնի է նաև գերմանացի գրող, հրապարակախոս դոկտոր Ա. Թ. Վեգների՝ 1919 թ. փետրվարի 23-ին ժամանակի ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին ուղղած բաց նամակը, որտեղ նա ականատեսի վստահությամբ փորձում է նախագահին հասցնել հայ ժողովրդի անասելի տառապանքների ճիշդ<sup>27</sup>:

Կատարվածի ցեղասպանական բնույթը հաստատվում է նաև բազմաթիվ այլ արխիվային փաստաթղթերով<sup>28</sup>: Իսկ ինչ վերաբերում է իրադարձությունների Լյուիի արժևորումներին, ապա դրանք չի կարելի հիմնավորված համարել, քանի որ նրա հորինած պատմությունը լի է պատմական փաստերի բազմաթիվ աղավաղումներով: Պատմական իրողությունների հենքի վրա լեզվական փաստերի մեր քննությունը ցույց է տալիս, որ հեղինակի հիմնական մտադրությունն ու բացահայտ թուրքամետ նպատակն այս գրքում միտված են հայ - թուրք հարաբերությունների բուն էությանը վատատեղյակ ընթերցողի ընկալման վրա ազդելու և թուրքական տեսակետները տարածելու գործին, որն էլ նա փորձում է իրականացնել համոզման իր ռազմավարությամբ: Ուստի, միանգամայն իրավացի է ազգությամբ թուրք պատմաբան-հանրաբան Թ. Աքչամը, որը գտնում է, որ Լյուիի մասնագիտական որակները այսօրինակ ուսումնասիրություն նախաձեռնելու առումով տարակուսանք են հարուցում<sup>29</sup>:

---

<sup>25</sup> Տե՛ս *toll* - the amount of damage or the number of deaths and injuries that are caused in a particular war, disaster, etc, "Oxford Advanced Learner's Dictionary", Oxford - New York, Oxford University Press, 2001, էջ 1368:

<sup>26</sup> Տե՛ս Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Article II, 1948, December 9, UN, տե՛ս նաև՝ **Ս. Գասպարյան**, «Եղեռն» բառի համարժեքության դաշտը անգլերենում («Վեմ» համահայկական հանդես), 2010, № 1:

<sup>27</sup> Տե՛ս <http://www.vhec.org/images/pdfs/armenian%20te>

<sup>28</sup> Տե՛ս, օրինակ, АВІР, Политархив, д. 3508, л. 16, АН АРМ ССР, "Документы французских архивов о геноциде армян". Ер., 1985, Deutsches Zentralarchiv, Historische Abteilung P, Akten № 2/3340, В1. 192 և այլն (ըստ՝ **Ս. Պողոսյան**, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, Եր., 2011), տե՛ս նաև՝ **А. Вегнер**. Судебный процесс Талаата Паши (стенографический отчет о судебном процессе с предисловием А. Вегнера и приложением). Берлин, 1921; М., 1992:

<sup>29</sup> Տե՛ս **T. Akcam**, Review Essay: Guenter Lewy's The Armenian Massacres in Ottoman Turkey // Genocide Studies and Prevention, № 3.1, Toronto, University of Toronto Press, 2008, էջ 111-145:

**СЕДА ГАСПАРЯН – “Истина” Гюнтера Люи о Геноциде армян.** – Статья посвящена критическому разбору работы Гюнтера Люи “The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide” (Резня армян в Османской Турции: оспоренный геноцид). Автор этой работы задался целью во что бы то ни стало поставить под сомнение и опровергнуть Геноцид армян в Османской империи (конец XIX – первая четверть XX вв.). Путем скрупулёзного текстологического анализа с привлечением необходимого культурно-исторического и фактографического материала в статье выявлены языковые стратегии, используемые Г. Люи, чтобы добиться поставленной цели.

**SEDA GASPARYAN – Guenter Lewy’s “Truth” about the Armenian Genocide.** – The paper is devoted to the critical analysis of the book “The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide” by Guenter Lewy who, as it were, aims at denying the undeniable fact of the Armenian Genocide in the Ottoman Empire at the end of the XIX and beginning of the XX centuries. The textological approach to the study of the mentioned work against the background of the cultural-historical information required reveals Lewy’s policy of language use and strategy to persuade the unsophisticated reader in his concocted unreality of the Armenian Genocide.